




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Լ Կ Յ Ե Մ Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ս Տ Ի Ճ Ա Ն Ի

№ 11 ԲԱՆԴԱՊԵՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՊԵՏԻՆ

3K7

4-

2muy.

3KCM

20732

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ

ՈՒ

ԿՈՄՅԵՐԻՏԱՒՈՒԹՅՈՒՆԸ

A 3850

Թարգմ. Գ. Տ. Աստվածատրյան



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

Գրառեպլար № 53բ.

հ. 500

Տիրած 4.000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեանում.—178.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻՈՒԹՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՈՒ ԿՈՒՍԱԿ- ՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանվոր յերիսասար- Մեր միությունը կոմմու-
ղուքյունը միության նիստական է անվանվում: Ամ-
հիմնական ղեկավա- բողջ կուսակցության հետ
րող կորիզն է միասին, ամբողջ բանվոր
դասակարգի հետ միասին Միությունը պայքա-
րում է պրոլետարական պայքարի վերջնական
նպատակի, այն է՝ կոմմունիստական հասարակարդ
ստեղծելու համար: «Լինելով համապրոլետարա-
կան շարժման մի մասը, ՌԼԿՅԵՄ իր աշխատան-
քով ու հանձնարարություններով հանդիսանում
է դասակարգային պրոլետարական կազմակեր-
պություն» (ՌԼԿՅԵՄ ծրագրից):

Անցնենք այժմ միության սոցիալական
կազմի քննության:

ՄԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1926 թվի ապրիլի 1-ին միության 100 անդամից չեղել են՝

Բանվորներ	Բատրակներ	Գյուղացիներ	Այլք
35	8	47	10

Յուրաքանչյուր 100 չեքիտասարդ բանվորից (մինչև 23 տարեկան) միության մեջ չեղել է

6-րդ համագումարին	7-րդ համագումարին
20 հոգի	46 հոգի

Միության յուրաքանչյուր 100 չեքիտասարդ բանվորից գտնվում են
 Խոշոր ձեռնարկ. միջին ձեռնարկ. մանր ձեռնարկ.
 45 53 67

Մեջ բերած դիագրամից չերևում է, վոր մեր Միությունը, վորը պրոլետարական է իր էությունով, իր կազմով բանվորագյուղացիական է։ Այստեղից էլ Միության աշխատանքի համար առաջ են գալիս մի շարք դժվարություններ։

Վորպեսզի Միությունը ճիշտ աշխատի, աշխատի հեղափոխության անելիքների համեմատ, կոմյերիտական վողջ շարժումը պետք է ղեկավարի նրա պրոլետարական մասը։ Այդպես էլ ասում է Միության ծրագիրը. «հիմնական և ղե-

կավար կորիզը հանդիսանում է բանվոր չեքիտասարդությունը»։

Միության աճումը գյուղում, Միության կողմից գյուղական չեքիտասարդության ավելի լայն խավերի ընդգրկումը հսկայական նշանակություն ունի կուսակցության գյուղում տանելիք աշխատանքների համար։ Բայց վորպեսզի Միությունը կամուրջ ծառայի կուսակցության և գյուղացիության միջև, անհրաժեշտ է Միության մեջ ապահովել ուժեղ պրոլետարական ղեկավարությունը, անհրաժեշտ է Միության մեջ բանվոր չեքիտասարդության ղեկավար դերը։

Միության անմահ Դրա համար մեծ նշանակություն ունի Միության աճման կանոնավորումը, այսինքն՝ այդ աճմանը վորոշ ուղղություն տալը։ Կուսակցության 14-րդ համագումարն ասել է. «Անհրաժեշտ է Միության սոցիալական կազմի սխտեմատիկ կարգավորումը տանել այնպես, վորպեսզի մշտապես պահպանվի նրա պրոլետարական ղեկավարությունը»։

Ճիշտ կը լինի, արդյոք, չեթե արգելվի գյուղացիական չեքիտասարդության մուտքը Միության մեջ։ Իհարկե, այդ վտանգավոր սխալ կը լիներ, վորովհետև այն ժամանակ Միությունը կը դադարեր իրագործել իր անելիքները բանվորնե-

րի և գյուղացիների դաշինքի ամրացման և գյուղացիական չերիտասարդությանն կոմմունիստներն, դաստիարակելու ասպարիզում: Միության մեջ գյուղացիներ չընդունելն այն հետևանքը կունենար, վոր գյուղացիական չերիտասարդությունը կը կազմակերպվեր Միությունից դուրս, նրա ազդեցությունից դուրս, կը ստեղծվելին գյուղացիական չերիտասարդության «անկուսակցական», կոմյերիտմիության ներհակ խմբակներ: Կոմյերիտմիությունը պետք է շարունակի հետազայում ևս իր շարքերն առնել գյուղացիական չերիտասարդությանը՝ պրոլետարիատին մոտ կանգնած գյուղի խավերից:

Միության հենարանը գյուղում չքավոր ու բատրակ չերիտասարդությունն է: Կոմյերիտմիությունը պետք է ձգտի ընդգրկել բատրակ չերիտասարդությունն ամբողջապես և չքավոր չերիտասարդության լայն մասնաներին: Դրա հետ միասին պետք է շարունակել Միության մեջ գրավել միջակ չերիտասարդության լավագույն մասին: Իսկ լավագույն միջակը նա չէ, «ով ձգտում է չքավորների ու բատրակների հետ դաշինք կապել ընդդեմ կուլակի, ով ձգտում է անտեսությունը կուլտուրական ձևերով վարել, կոռպերացման չենթարկել գյուղը, ով ձգտում է արգել կուսակցությունը, Միությանը և խորհրդա-

յին իշխանությունը» (Զապլին, ՀամԼԿՅԵՄ 7-րդ համագումարում արած զեկուցումից):

Միաժամանակ կուսակցություն 14-րդ համագումարը նշում է, վոր պետք է չուժեղացվի Միության աճման չափը գյուղում և պետք է «զսպվի» նրա հետագա թափը: Իսկ ավելի առաջավոր, պրոլետարիատին մոտ կանգնած գյուղական չերիտասարդության խավերին Միության մեջ գրավելու խնդիրը կուսակցություն համագումարը «Միության պարտադիր անելիքն է» համարում:

Այդպիսով Միության գյուղացիական մասը պետք է աճի և հետազայում: «Դրանով իսկ Միության ղեկավար խավի՝ ինդուստրիալ պրոլետարական չերիտասարդության կազմակերպման անհրաժեշտությունը դառնում է ավելի հրամայական» (14-րդ համագումարի վորոշումներից): Միության մեջ պրոլետարական ղեկավարություն ապահովելը պահանջում է վորպեսզի կոմյերիտմիության մեջ մտնող գյուղացիական չերիտասարդության նորաճող շրջատներին հետ միասին ավելի արագությունը թանափող թանվոր չերիտասարդությանը Միության մեջ գրավելու աշխատանքը:

«Բանվոր չերիտասարդությունը հարյուր տո-

կոսով Միութեան մեջ գրավելը — դա չէ մոմենտի հրամայական անելիքը, մի անելիք, վոր իր առորջա աշխատանքների ընթացքում ամենայն համառութեամբ պետք է կիրառի յուրաքանչյուր գործարանային բջիջ: Իհարկե, այդ չի նշանակում, վոր մեզ կը հաջողվի այդ խնդիրն իրագործել միանգամից, ասեմք, մի տարվա ընթացքում: Կոմյերիտմիութենը միշտ պետք է հիշի վոչ միայն քանակի, այլև վորակի մասին: Չի կարելի մեքենայորեն Միութեան մեջ առնել վողջ բանվոր չերիտասարդութեանը: Կոմյերիտմիութեան մեջ մտնելու հարցի շուրջը պետք է տարվի լայն բացատրական աշխատանք: Միութեան մեջ մտնելով չերիտասարդ բանվորը պետք է իմանա, վոր կոմյերիտականը խորհրդային յերկրի առաջավոր կառուցողն է:

Ներկայումս մենք ինչ չափով ենք ընդգրկուկել բանվոր չերիտասարդութեանը:

Արդեն մեջ բերված դիագրամից չերևում է, վոր չերկու տարվա ընթացքում մենք ունենք նշանակալից հաջողութիւններ: Սակայն բանվոր չերիտասարդութիւնն ամբողջապէս Միութեան մեջ գրավելուց դեռ մենք հեռու չենք, և մեծ աշխատանք է սպասում մեզ այդ ասպարիզում:

Դիագրամը միաժամանակ ասում է և այն մասին, վոր անհրաժեշտ է խոշոր ձեռնարկու-

թիւններում ավելի մեծ թափով առաջ տանել բանվոր չերիտասարդութեան Միութեան մեջ առնելու աշխատանքը:

Աճման ճիշտ կանոնավորումը հանդիսանում է Միութեան մեջ պրոլետարական դեկավարութեան պահպանման պայմաններից մեկը:

Միութեան բանվորական գիտնական միութեան Միութեան պայմանը հանդիսանում է կոմյերիտմիութեան բանվորագյուղացիական ամուր միասնութիւնը Միութեան պրոլետարական մասի դեկավարութեամբ:

Այդ միասնութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է Միութեան պրոլետարական կորիզի ճիշտ գիծը, ճիշտ վերաբերմունքը գյուղացի կոմյերիտականների նկատմամբ: «Բանվորական» ամեն մի անապարժութիւն, Միութեան մեջ բանվորներին և գյուղացիներին միմյանց հակադրելու ամեն մի փորձ խախտում է այդ միասնութիւնը: Պետք է վճռապէս պայքարել այն կորիզի հայտարարութիւնների դեմ, թե, իբր, չես առաջավոր բանվոր կոմյերիտական եմ, իսկ գյուղում, Միութեան մեջ անգարգացած գեղջուկներ են: Նույնպէս փաստակար է հանդիսանում չերբեմն գյուղական կոմյերիտականների մեջ դեպի

բանվոր չերիտասարդութիւնը նկատվող խանդը, իբր, բանվորները լավ են ապրում և այլն:

Միութեան բանվորական մասը պետք է ոգնի գյուղացի կոմյերիտականներին՝ իրենց լավագոյն անդամներին գյուղ ուղարկելով: Միութեանն իր պրոլետարական կորիզից պետք է առաջադրի ակտիվի ջոկատներ գյուղում գործելու և Միութեան վողջ աշխատանքը ղեկավարելու համար:

Բայց գյուղը բանվորական ակտիվի միջոցով սպասարկելը դեռ քիչ է: «Պետք է այնպես անել, վոր գյուղացիական չերիտասարդութիւնը գյուղում ունենա բազմամարդ ակտիվ, պետք է քաղաքականապես դաստիարակել այդ ակտիվին, պետք է նրան դարձնել պրոլետարական քաղաքականութեան տարածողը գյուղում և նրան դարձնել՝ պրոլետարիատը աշխատավորական գյուղացիական մասսաներին կապող ցեմենտը» (Ստալին):

ԿՅԵՄ Լենինգրադի նախկին նահանգական Էոմիտեյի ընկերների գլխավորութեամբ հրապարակ չեկած ոպպոզիցիան ասում էր, վոր գյուղացիական չերիտասարդութիւնից ակտիվ պետք է պատրաստել միայն այն դեպքում, չեթե չի բավականացնի բանվորական մասից դուրս չեկած ակտիվը: Նման հարցադրումը միայն կարող է

թուլացնել Միութեան բանվորագյուղացիական միասնութիւնը: Իհարկե, գյուղացիական չերիտասարդութիւնից ակտիվ պատրաստելը դժվար խնդիր է, բայց և այնպես, ինչ գնով ել լինի, պետք է լուծել այդ խնդիրը:

«Միանգամայն անհնար է լուծել այդ խնդիրը կարճ ժամանակամիջոցում: Անհրաժեշտ է կոմյերիտմիութեան պրոլետարական կորիզի հրակայական ջանքերն ու ուժերի խոշորագոյն լարումն նրա համար, վորպեսզի գլուխ բերվի այդ խնդիրը: Բայց այդ խնդիրը պետք է լուծել ինչ ել վոր լինի, քանի վոր առանց դրան հնարավոր չէ վոչ կոմյերիտմիութեան ամրացում, վոչ բանվորների ու գյուղացիների միջև մերձեցման ապահովումը» (Ստալին, «Գյուղացիական հարցը» — էջ 57):

Կուսակցական համագումարը մատնանշում է, վոր «անհրաժեշտ է ամեն կերպ խուսափել այնպիսի միջոցներից, վորոնք կարող են խզել Միութեան պրոլետարական և գյուղացիական մասերի մեջ չեղած կապը»:

Այդ տեսակետից համագումարը դատապարտեց գյուղում գյուղացիական չերիտասարդութեան պատգամավորական խորհրդակցութիւնների կազմակերպումը, վոր առաջարկվում էր դեռ համագումարից առաջ: Առաջին անգամ նը-

ման առաջարկ արել եւրնի. Զինովին իր «Լենինիզմ» գրքում, և ապա այդ առաջարկը կրկնել են Լենինգրադի կոմյերիտական կազմակերպութեան մի քանի ուսանողները: Ինչ հետեանքներ կարող ելին ունենալ սլաւոֆոֆներին մշտական կազմով գոյութիւն ունեցող նման խորհուրդակցութիւնները: Միանգամայն ակնհայտ է, վոր այդ խորհրդակցութիւնները կը գաւնային յերիտասարդութեան մի նոր կազմակերպութիւն, վորն իրեն կը հակադրեր կոմյերիտութեանը: Գլուղում Միութեան անելիքն է կազմակերպել իր բշիջներում, կամ բշիջների շուրջը գլուղացիական յերիտասարդութեան մեզ ամենից մոտ գրտնրվող խավերին: Բացի ԼԿՅՆՄ բշիջից գլուղում գոյութիւն ունեն մի շարք կազմակերպութիւններ, վորոնց միջոցով գլուղացիական յերիտասարդութեան ակտիվութիւնը կարելի չէ ուղղել կուսակցութեան համար կարեւոր հունով: Այդպես են, որինակ՝ գլուղատնտեսական խմբակները, խրճիթ-ընթերցարանը, կոոպերացիան և այլն: Բացի կոմյերիտութիւնից վորեւէ այլ կազմակերպութիւն ստեղծելը կառաջացներ գլուղացիական յերիտասարդութիւնը կոմյերիտութեան ազդեցութիւնից հեռանալու վտանգը, գլուղացիական յերիտասարդութեան վրա չեղած պրոլետարական ղեկավարութեան կորցնելու վտանգը:

Ինչով բացատրել այդ առաջարկի ծագումը: Այդ պարզ ցույց տվեցին մի քանի կոմյերիտական ուսանողները յելույթները: Նրանց դատողութիւններն իմաստն այս էր. Միութեանն աճում է, բատրակներին ու չքավորներին մենք ընդունում ենք, բայց վախ կա, վոր Միութեան մեջ գալիս է միջակը, վորն իր հետ բերում է մանր բուրժուական, սեփականատիրական հայացքներ: Ուստի անհրաժեշտ է ձեռք առնել այնպիսի միջոցներ, վորպեսզի վորեւէ տեղ կասեցնենք միջակին: Պատգամավորական խորհրդակցութիւնները հենց առաջարկվում ելին գլուղացիական յերիտասարդութեան միջակ մասի համար: Այսպիսով մենք աշտտեղ տեսնում ենք «միջակից վախենալու» յերեւելթը, կուլակի ու միջակի մասին ընդհանուր կուսակցական տարածաշնութիւնների արձագանքը:

Միութեան բանվորագլուղացիական միասնութիւնը՝ Միութեան մեջ պրոլետարական ղեկավարութիւնն ապահովելու յերկրորդ պայմանն է:

Կուսակցութեան Մի- Բայց Միութեան մեջ ուրբանը ցույց տված պրոլետարական ղեկավարութիւնը վարութիւնն ապահովելու գլխավոր պայմանը հանդիսա-

նում ե Միութեան վրա ունեցած կուսակցութեան ղեկավարութիւնը:

Միութեան մեջ բանվոր յերիտասարդութեան ղեկավարող դերը կարող ե ապահովվել միայն կուսակցութեան ղեկավարութեան դեպքում: Միայն կուսակցութեան ղեկավարութեամբ Միութեան բանվորական կորիզը կարող ե բանվոր դասակարգի ու հեղափոխութեան շահերին համապատասխանող ճիշտ քաղաքականութիւն վարել:

Չափազանց փաստակար ու վտանգավոր ե Միութեան մեջ պրոլետարական ու գույղացական ղեկավարութեան յուրաքանչյուր հակադրութիւն, թե իբր, այլ բան ե պրոլետարական ղեկավարութիւնը, և այլ՝ կուսակցական ղեկավարութիւնը: Կուսակցութիւնը բանվոր դասակարգի առաջավոր մասն ե, վոր իր յետեից տանում ե ամբողջ դասակարգին: Բանվորական յերիտասարդութիւնը բանվոր դասակարգի մի մասն ե: Պրոլետարական ղեկավարութիւնը հակադրել կուսակցական ղեկավարութեան միեւնոյն ե, թե դասակարգը հակադրել կուսակցութեանը: Նման հակադրութիւնը կուսակցութեան ղեկավարութեան խախտումն ե, դեպի կուսակցութիւնը տաժած վստահութեան խախտում, վորը կարող ե չափազանց փաստակար «հետեւանքներ ունենալ

Միութեան աշխատանքի վրա, նրա հետագա ամբողջման վրա:

Մինչդեռ նման հակադրութիւն տեղի չե ունեցել Լենինգրադի կոմյերիտմիութեան նույն ղեկավարողների կողմից: Ահա, որինակ՝ թե ինչ եր գրում այդ ընկերներից մեկը. «Չի կարելի կարծել, վոր պրոլետարական կորիզի ղեկավարող դերը կարող ե ապահոված լինել հենց միայն կուսակցական ղեկավարութեան գոյութեան փաստով»:

Այս խոսքերի ընդհանուր իմաստը միանշանակն պարզ ե, այսինքն՝ թե կուսակցական ղեկավարութիւնը չի ապահովում Միութեան մեջ պրոլետարական ղեկավարութիւնը: Լենինյան կոմյերիտմիութիւնը վճռական դիմադրութիւն ցույց տվեց նման վտանգավոր թեքումներին: «Կուսակցութեան ղեկավարութիւնը, — ասել ե ԼԵՅՆՄ 7-րդ համագումարը — գլխավոր պայմանն ե հանդիսանում ապահովելու համար կոմյերիտմիութեան գյուղացիական մասին կատմամբ պրոլետարական ազդեցութիւնն ու ղեկավարութիւնը»: Միութեան կանոնադիրքն ասում ե, «Կոմյերիտականը կուսակցութեան ոգնականն ե և աշխատում ե նրա անշեղ ղեկավարութեամբ, ուստի յուրաքանչյուր կոմյերի-

տականը պետք է ամեն տեղ և ամեն ժամանակ վճռական դիմադրութիւն ցույց տա կոմյերիտմիութիւնը կուսակցութեանը հակադրելու փորձերին»:

Կուսակցութեան ղեկավարութեան համար հսկայական նշանակութիւն ունի կոմյերիտմիութեան մեջ յեղած կուսակցական կորիզը: Այդ կորիզը մեծ չէ. յուրաքանչյուր հարյուր կոմյերիտականից կուսակցութեան անդամ է մոտ 3 հոգի, և կուսակցութեան թեկնածու՝ 6 հոգի, ընդամենը մոտ 9 հոգի: 7-րդ համագումարն ասում է. «Անհրաժեշտ է հատուկ ուշադրութիւն դարձնել կոմյերիտմիութեան կուսակցական կորիզի, նրա աճման ու դաստիարակութեան, նրան կուսակցական կյանքի մեջ քաշելու վրա, միաժամանակ լիովին ոգտագործելով կուսկորիզը միութենան գործնական աշխատանքներում»:

Կոմյերիտականը կուսակցութեան ոգնականն է. կանոն ու ոժանգակն է Միութեան աշխատանքին պատակն ու անելիքներն են ոգնել կուսակցութեանը սոցիալիզմի համար նրա մղած պայքարում: Միութեան յուրաքանչյուր անդամ պետք է կուսակցութեան հայացքների ու ձեռնարկած միջոցների ակտիվ հաղորդիչը լինի: Կոմյերիտմիութիւնը կուսակցութեան ոժանգակն է (резерв),

նրա համար թարմ ուժերի աղբյուր է: Միութիւնը կուսակցութեան դաստիարակելով բանվորագյուղացիական չերիտասարդութեանը, պատրաստում է կուսակցութեան համար մարտիկների ու կառուցողների նորանոր շարքեր: «Փոխարինենք մեծերին, մարտում հոգնածներին», — ասում է կոմյերիտական լոզունգներից մեկը:

Կուսակցութեան բո-

լոր վորոշումները

կոմյերիտմիութեան

համար պարտադիր են


Կուսակցութիւնը ղեկավարում է կոմյերիտմիութիւնը, կուսակցութեան բոլոր վորոշումները կոմյերիտմիութեան համար պարտադիր են: Կոմյերիտական շարժումը ծագել ու զարգացել է կուսակցութեան ղեկավարութեամբ: Յեւ վորքան ավելի է աճում կոմյերիտմիութիւնը, վորքան ավելի բարդ են այն խնդիրները, վոր դրվում են Միութեան առաջ, այնքան ավելի ուժեղ պետք է լինի կուսակցութեան ղեկավարութիւնը:

Կոմյերիտմիութեանը ցույց տված ղեկավարութեան հարցերին կուսակցութիւնը նվիրում է չափազանց մեծ ուշադրութիւն: Իր համագումարներում կուսակցութիւնն, ինչպես հայտնի է, դնում է իր աշխատանքի ու պայքարի ամենից խոշոր ու կարևոր հարցերը: Յեւ մենք տեսնում ենք, վոր չերիտասարդութեան վերաբերյալ

20732

3850

A



հարցը դրվում է համարյա յուրաքանչյուր համագումարում:

Փետրվարյան հեղափոխությունից հետո մինչև այժմ տեղի չե ունեցել 9 կուսակցական համագումար: Կոմյերիտմիությունյան հարցը, վորպես որակարգի առանձին հարց դրված է չեղել այդ համագումարներից չերեքում. 11-րդում (1922 թ. մարտին, վորպես հարակից զեկուցում «Կուսակցության ուժեղացման և նոր խնդիրների մասին» զեկուցմանը) 13-րդ (1924 թվի մայիսին) և 14-րդում (1925 թվին):

Կուսշինարարության այլ հարցերի հետ միասին Կոմյերիտմիության աշխատանքն ու Միության վերաբերյալ կուսակցության խնդիրները քննության են առնվել 10-րդ (1921 թվի մարտին «Կուսակցության շինարարության հարցերը» զեկուցման առթիվ) և 12-րդ համագումարում (1923 թվի ապրիլին. տես կազմակերպչական հարցի վերաբերյալ զեկուցումը):

Յերիտասարդության մասին առանձին վորոշումներ են ընդունված վեցերորդ (1917 թվի հուլիսից—ոգոստոս) և ութերորդ (1919 թվի մարտի) կուսակցական համագումարներում:

Յեթե չհաշվենք կուսակցության յոթերորդ համագումարը, վոր հրավիրված եր հատկապես գերմանական իմպերիալիզմի հետ Բրեստի հաշ-

տությունը կնքելու համար, այն ժամանակ կր տեսնենք, վոր հեղափոխությունից հետո տեղի ունեցած յուրաքանչյուր կուսակցական համագումարում այսպես թե այնպես դրվել է կոմյերիտմիության հարցը: Իսկ վերջին տարիներում կուսակցությունն առանձնապես հաճախ է դնում այդ հարցը:

«Կոմյերիտմիության նկատմամբ ղեկավարությունը,—ասում է կուսակցության 14-րդ համագումարը,—ներկա մոմենտում կուսակցության կարևորագույն ու առաջնակարգ խնդիրն է»:

Կոմյերիտմիության և Կոմյերիտական շար-
կուսակցության հետ ժուժն առաջացել ու զար-
միասին պայքարում գացել է բալլընիզմի հին
և հակալեհիցյան քե-
հումների դեմ
գվարդիայի շտաբի — Կու-
սակցության Կենտրոնական
Կոմիտեի ղեկավարությամբ և նույն ղեկավա-
րությամբ կարող է առաջիկայում ևս հաջողու-
թյամբ ղեկավարել բանվորագյուղացիական չե-
րիտասարդության ամբողջ շարժումը:

Կոմյերիտմիությունը գիտե, վոր այն դժվա-
րությունների պայմաններում, վոր ստիպված է հաղթահարել բանվոր դասակարգը, անխուսափե-
լի չեն տատանումներն ու չերեքումները կուսակ-
ցության այս կամ այն մասի կողմից: Անխու-
սափելի չեն թեքումները կուսակցության լենին-

յան ճիշտ քաղաքականությունից: Կոմյերիտմիությունը կուսակցության հավատարիմ ոգնականն է, միշտ ամբողջ կուսակցության հետ կողք-կողքի կը պայքարի հակալենինյան թեքումների դեմ, կուսակցության միասնականություն կոտրելու փորձերի դեմ:

Քանի վոր չերիտասարդության համար չի կարող «վոչինչ ավելի մոտ լինել, քան այն կուսակցության բախտը, վորը նրան բերել հասցրել է հաղթանակի, վորը ջախջախել է նրա թշնամիներին» (ԿՅՆՄ 6-րդ համագումարի դիմումից): Յերբ զանազան ոպպողիցիաները հանցափորձ ելին կատարում կուսակցության միասնության դեմ, չերբ նրանք փորձում են փոփոխել ու խեղաթյուրել կուսակցության լենինյան քաղաքականությունը, այն ժամանակ կոմյերիտմիությունը ամբողջ կուսակցության հետ միասին պայքարում է կուսակցության ամբողջական ու միասնության համար:

Լենինն ասում էր, վոր կոմյերիտականը կոմմունիզմ կը սովորի միայն աշխատանքի մեջ, միայն պայքարում: «Առանց աշխատանքի, առանց պայքարի, գրքերից ստացած կոմմունիզմի գիտելիները բացարձակապես վոչինչ չարժի»: Լենինի դմից կատարած զանազան շեղումների դեմ կուսակցության մասնակցությունը մեծ տեղ է

բռնում Միության կոմմունիստական դաստիարակության մեջ: Մեր կուսակցությունը կոփվել է մանր բուրժուական թեքումների դեմ մղած անընդհատ պայքարում: Կուսակցության գաղափարական մարտերը հսկայական նշանակություն ունեն կոմյերիտական շարքերի բալլշևիկական զոդման համար:

Միության 6-րդ համագումարի դիմումն ասում է. «Կոմյերիտականները պետք է հիշեն, վոր այնպես, ինչպես և յուրաքանչյուր մասսայական բանակում, մեր կուսակցության ծանր ու դժվարին բոպեններին անխուսափելի չեն տատանումները, չերերումները, շեղումները, չերբ անկայուն, մինչև վեր բալլշևիկյան վոգով չհամակված տարրը սկսում է չերերալ, շեղվել լենինյան ճիշտ ճանապարհից, ձգտում է իր չետից մանր բուրժուական ճահիճը քաշելու ամբողջ կուսակցությանը»:

Այդպիսի բոպեններին բոլոր կոմունիստների զոդումից, պողպատե միասնությունից, անխախտ կարգապահությունից, Լենինի ավանդների հատատուն նվիրածությունից է կախված կուսակցության, իսկ նրա հետ միասին աշխարհիս առաջին բանվորական պետության բախտը:

Ուստի կոմյերիտականները, վորոնք իրենց

Միությունը Լենինյան են անվանել, և՛ առորյա աշխատանքներում և՛ կուսակցության համար դրժվարին ընդհանրում հավատարիմ պահպանողները կը լինեն կուսակցության մեջ Լենինի անվանողների, միասնության, գոգման ու բալլեվիկական ղեկավարության: Նրանք վոչ վոքի թույլ չեն տա կուսակցությանը շեղելու Լենինյան ճանապարհից, խախտելու նրա հարյուր տոկոսով բալլեվիկական միասնությունը»:

Կոմյերիտմիությունը նրա համար չէ մասնակցում կուսակցական դիսկուսիաներում, վորպեսզի իր ձայնով ճնշում գործ դնի կուսակցության վրա: Կուսակցությունը ինքն է վորոշում, թե ներկուսակցական վոր հարցը կարելի չէ դնել կոմյերիտմիության քննության, և վոր հարցը պետք է մնա գուտ կուսակցական շրջանակներում: Մասնակցելով հակալենինյան շեղումների դեմ մղած պայքարին, կոմյերիտմիությունը միակ նպատակ է դնում Միության լենինյան դատարակությունը:

Կոմյերիտմիությունը Կուսակցության մեջ հակալենինյան խմբակները սիակազրելու վսանգը տեմատիկ կերպով ձգտում են կոմյերիտմիությունն ոգտագործելու կուսակցության դեմ մղած պայքարի համար: Առաջին անգամ այդ փորձեց անելու ընկ. Տրոցկին 1913

թվի դիսկուսիայի ժամանակ: Այն ժամանակ ընկ. Տրոցկին աշխատում էր հենվել չերիտասարդության վրա կուսակցության դեմ մղած պայքարում: Նա շողոքորթում էր չերտասարդությանը (մանավանդ բարձրագույն կրթական հիմնարկների չերիտասարդությանը, վորոնց մեջ այն ժամանակ բանվորների թիվը դեռ քիչ էր), անվանելով նրան ծանրաչափ (բարոմետր—չեղանակը գուշակող գործիք): Նրա ասելով, չերիտասարդությունը, և մանավանդ բարձրագույն կրթական հիմնարկների չերիտասարդությունը, իբր թե միակն է, վոր կարող է ճիշտ արտահայտել կուսակցության տրամադրությունը, բանվոր դասակարգի շահերը:

Կոմյերիտմիությունը կուսակցության դեմ ոգտագործելու չերկրորդ փորձը մենք տեսնում ենք նոր ուղղուցիայի կողմից՝ ընկ. ընկ. Զինովևի և Կամենևի գլխավորությամբ: Նոր ուղղուցիան ձգտում էր հենվել Լենինգրադի կոմյերիտական կազմակերպության վերին խավերի վրա:

Լենինգրադի կոմյերիտական կազմակերպությունը խստիվ դատապարտեց իր ուղղուցիոն վերին խավին, վերընտրեց իր ղեկավարող մարմիններին: Յեվ ԿՅԵՄ 7-րդ համագումարում Լենինգրադի պատվիրակությունն ամբողջ համա-

գումարի հետ միասին միահամուռ կերպով դա-
տապարտեց կոմյերիտական ուղադրիցիոներնե-
րին:

Կոմյերիտի ուղադրիցիոները

սովորում է բայցե-

վիզմի հին գվար-

դիայի որհալով

Ձգտելով կոմյերիտմիու-
թյունն ոգտագործել կու-
սակցության դեմ, ուղադրի-
ցիոն հոսանքները աշխա-

տում ելին կուսակցության մեջ իրար հակադրե-
լու չերկու սերունդը՝ բայցևիզմի հին գվարդիան
և կոմյերիտմիությունը:

Հին բայցևիկներին, վորոնք կուսակցության
շարքերն են մտել հեղափոխությունից առաջ,
վորոնք կրել են բայցևիկական պայքարի ամբողջ
ծանրությունը, այդ «հին գվարդիայից» կուսակ-
ցության մեջ կա մոտ 10 հազար հոգի: Պետք է
հին գվարդիայի վոգին պատվաստել հեղափոխա-
կանների նոր սերնդին: Պետք է, վոր հին
գվարդիայի առորչա պայքարի և աշխա-
տանքի որինականերով կուսակցական-
ների չերիտասարդ սերունդը սովորի
բայցևիկական տոկոսնության, չուրա-
քանչյուր մանրբութեան կան թեքում-
ների դեմ մղած պայքարում չեղած
բայցևիկական անհաշտության:

Ուղադրիցիան ձգտում է սեպ խփել չերկու
սերունդների միջև, ուղղում է անվստահություն

սերմանել դեպի բայցևիզմի հին գվարդիան ու
նրա շտաբը կուսակցության կենտրոնական կո-
միտեն: Կոմյերիտմիությունը վճռապես դիմա-
դրում է նման փորձերին:

ԻՆՉՊԵՍ Ե ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ ԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Յերթասարգության

Միությունը վորպեսզի

նոր պահանջները

իրագործի իր՝ բանվորա-

գյուղացիական չերիտասարդության դաստիա-
րակչի՝ խնդիրները, պետք է սերտորեն կապված
լինի այդ չերիտասարդության հետ, պետք է լսի
նրա պահանջները: Իսկ չերիտասարդության պա-
հանջները փոխվում են տարեցտարի: Քանի վոր
փոխվում են կյանքի պայմանները, վորով ապ-
րում է և աճում չերիտասարդությունը: Կոմյե-
րիտմիությունը պետք է հաշվի առնի չերիտա-
սարդության նոր պահանջները: Միությունը մի-
այն այդ դեպքում կարող է ճիշտ կառուցել իր
աշխատանքը:

Վորոնք են բանվորագյուղացիական չերի-
տասարդության նոր պահանջները: Նախընթաց
գրույցում մենք արդեն առիթ ունեցանք խոսե-
լու բանվորական չերիտասարդության պահանջ-
ների մասին:

Արտադրութեան մեջ գտնվող կոմյերիտականը ձգտում է բարելավելու իր նյութական դրութիւնը, ստանալու արհեստակցական տեխնիքական կրթութիւն և բարձրացնելու իր վորակը (կվալիֆիկացիան): Կենցաղի բնագավառում կոմյերիտականն ուզում է ունենալ կուլտուրական հանգիստ, գվարճութիւն:

Գյուղում չերիտասարդ բատրակը ձգտում է պաշտպանելու իր նյութական շահերը իր վարվ ձող կուլակից:

Զբաւորը, իսկ առավել ևս միջակը, ձգտում է բարձրացնելու իր (կամ կուլեկտիվ) տնտեսութիւնը հողի ավելի լավ մշակման միջոցով: Կոմյերիտականը գյուղում ձգտում է բարձրացնելու իր կուլտուրական մակարդակը, գիտութիւններ ձեռք բերելու, և ամենից առաջ այնպիսի գիտութիւններ, վորոնք անմիջական ոգնութիւն ցույց կը տան տնտեսութեանը:

Նման պահանջներ չերիտասարդ բանվորն ու գյուղացին չեն կարող ունենալ քաղաքացիական պատերազմի որերին: Այն ժամանակ աշխատանքի ու շինարարութեան բոլոր հարցերը լենթարկված են մի գլխավոր խնդրի, այն է՝ չերկրի պաշտպանութեանը: Յեւ կոմյերիտութեան ամբողջ աշխատանքն ուղղված էր ճակատի կարիքների համար ուժեր ժողովելուն: Լավ,

գիտակից կոմյերիտականից պահանջվում էր միայն մի բան, այն է՝ կարողանալ հրացան վերցնել ու գնալ ճակատ թշնամիների դեմ: Կոմյերիտականը պետք է ինքը գնար և համոզեր իր վառ խոսքով հետևելու իր որինակին: Այդպիսի կոմյերիտականի մի որինակ (Անատոլիի Պոպովը) մենք բերինք նախընթաց գրույցում:

Այժմ այլ խնդիրներ են դրած Միութեան առաջ: Հրացան առնելու պատրաստակամութիւնը կոմյերիտականը պետք է պահպանի ամենուրեք և ամեն ժամանակ, բայց մեր առօրյա աշխատանքի խնդիրները հիմնովին փոխվել են: Չի կարելի գրոհով ինդուստրացման լենթարկել չերկիրը: Տնտեսական աշխատանքը պահանջում է մանրակրկիտ աշխատանք, չերը յուրաքանչյուր աշխատանք ձեռք է բերվում միայն համառ աշխատանքներից հետո: Արդիւնաբերութեան և գյուղի կոոպերացիայի զարգացումը կախված է ու բաղկացած հարյուր հազարավոր մանր գործերից, վոր կատարում են հասարցի (դազգահի) կամ գութանի մոտ կանգնած առանձին բանվորներ ու գյուղացիներ:

Բանվոր դասակարգի գործի համար կռվել քաղաքացիական պատերազմի որերին նշանակում էր կռվել հրացանը ձեռքին ճակատներում: Այժմ այդ նշան-

նակում եւ արտադրողականութեան որինակ ծառայել ձեռնարկութեանն եւ ում և գյուղատնտեսութեան մեջ:

Բանվոր կամ գյուղացի յերիտասարդը Միութեան շարքերն եւ մտնում, ցանկանալով դառնալ խորհրդային շինարարութեան յեռանդուն մասնակցողը: Նա զգում է, վոր դրա համար պետք են գիտելիքներ, պետք եւ սովորել ու սովորել: Վորպեսզի կոմյերիտականը դառնա խորհրդային կառուցողը գյուղում, նա պետք եւ որինակելի տնտեսութիւն ունենա, նա պետք եւ մնացած յերիտասարդներին որինակ ծառայի հողի կուլտուրական ու արտադրողական մշակման համար, պետք եւ որինակ ծառայի կուլեկտիվ տնտեսավարութեան և կոոպերատիվ շինարարութեան: Գործարանի կոմյերիտականը պետք եւ բարձրացնի իր վորակը, հակառակ դեպքում նա չի կարող իրագործել աշխատանքի արտադրողականութեան բարձրացման խնդիրները: Միաժամանակ յերիտասարդ բանվորն ու գյուղացին պետք եւ բարելավեն իրենց նյութական դրութիւնը:

Բանվորագյուղացիական յերիտասարդութեան նման ձգտումները 14-րդ կուսակցական համագումարը միանգամայն առողջ եւ համարում:

Վոչ մի հակասութիւն չկա կոմյերիտականի այդ ձգտումների և հեղափոխութեան ընդհա-

նուր խնդիրների մեջ: Բանվորական ուժի վորակի բարձրացումը, — ինչպես տեսանք նախընթաց գրույցում, — չափազանց անհրաժեշտ եւ արդյունաբերութեան զարգացման համար: Նույնպես և գյուղատնտեսութեան բարձրացումը պահանջում եւ հողի մշակման ձևերի բարելավում, գյուղի կուլտուրական մակարդակի բարձրացում:

Հեղափոխութեան շահերին չեն հակասում նաև յերիտասարդութեան՝ իր նյութական դրութիւնը բարելավելու ձգտումները:

Ընդհակառակը: Խորհրդային Միութեան տնտեսական հետագա նվաճումները հնարավոր են միայն այն դեպքում, յերբ ավելի ու ավելի կը բարելավվի աշխատավորական լայն մասսաների նյութական դրութիւնը: Մեր առաջախաղացութիւնը դեպի սոցիալիզմ նախատեսում է մասսաների բարեկեցութեան աստիճանական ու անշեղ բարձրացում:

Կոմյերիտականը դեպի իր Միութիւնը դրնում է միանգամայն իրավացի պահանջ, այն եւ ոգնել նրան բավարարելու իր այդ պահանջներին: Բավականաչափ հաշվի՞ չե առել արդյոք Միութիւնը յերիտասարդութեան նոր պահանջները:

Կուսակցութեան 14-րդ և այնուհետև Միութեան 7-րդ համագումարները գտել են, վոր

Միութեան աշխատանքի գլխավոր թերութիւնը մասսաների տնտեսական աճման առթիվ առաջացած նոր պահանջների անհամապատասխանումն է կոմյերիտմիութեան աշխատանքի մեթոդներին, ձևերին ու բովանդակութեանը (կուսակցութեան 14-րդ համագումարի բանաձևը):

Ձեռնակարկութիւնն երբևէ չեղած յերիտասարդութեան նոր պահանջները բավականաչափ արձագանք չեն գրտնում ԿՅԵՄ բջիջների աշխատանքներում: Բավականաչափ չեն լուսաբանվում տվյալ արտադրութեան հարցերը, բանվոր յերիտասարդութեան կենցաղի կամ արտադրութեան վիճակի հարցերը: Գյուղական բջիջներում քիչ են դրվում գյուղատնտեսութեան վերաբերող հարցեր: ԿՅԵՄ 7-րդ համագումարն իր բանաձևերում առաջադրում է հետևյալ խնդիրը՝ պետք է Միութեան աշխատանքները հարմարեցնել Կոմյերիտմիութեան նոր պահանջներին:

Անճապակաճ շահերը Միութեանն իր աշխատանքների ընթացքում պետք է կապել քնդհանուր գասակարգային շահերի հետ: Գործարանային բջիջը պետք է ավելի մեծ ուշադրութեան դարձնի յերիտասարդ բանվորութեան վորակի բարձրացման, նրա կենցաղի և այլ

հարցերի վրա: Նույնը վերաբերում է նաև գյուղական բջիջներին գյուղատնտեսութեան վերաբերմամբ:

Բայց դրա հետ միաժամանակ կարող է մի այսպիսի վտանգ առաջանալ՝ հանկարծ կենցաղի ու արտադրութեան հարցերը չմթաղնեցնեն կոմյերիտականի գիտակցութեան մեջ հեղափոխական շինարարութեան ընդհանուր հարցերը:

Յերբ հարց ես տալիս կոմյերիտականին թե.

— Վորոնք են Միութեան խնդիրները, — ստանում ես յերբեմն այսպիսի պատասխան.

— Կոմյերիտմիութեանը պաշտպանում է բանվոր յերիտասարդութեան շահերը:

Ճիշտ է արդյոք այս պատասխանը: — Վոչ: Դրա մեջ կա և ճշտութիւն, բայց ավելի մեծ չափով անճշտութիւն: Քանի վոր պատասխանի մեջ տաված է միայն Միութեան աշխատանքի մի փոքրիկ մասնիկի, և վոչ թե նրա գլխավոր խնդրի մասին:

Միութեանը, իրավ վոր հոգում է արտադրութեան մեջ գտնվող յերիտասարդութեան շահերի մասին: Կոմյերիտմիութեանը պետական մարմինների և արհմիութեանների միջոցով աշխատում է բարձրացնել բանվոր յերիտասարդութեան վորակավորում, ամրացնում է նրա դրութեանն արտադրութեան մեջ:

Սակայն Միութեան գլխավոր խորհուրդին ե՛րբ ոգնել կուսակցութեանը հեղափոխական շինարարութեան մեջ և այն ամենը, ինչ անուամբ կոմյերիտմիութեանը, ուղղված է այդ գլխավոր խորհուրդի իրադրածմանը: «Յերիտասարդութեան շահերի պաշտպանութեանը» Միութեան աշխատանքի մի մասն է գրված խավոր խնդրի կատարման ժամանակ:

Միութեանն աշխատում է բարձրացնել բանվոր չեռիտասարդութեան վորակն այն պատճառով, վոր այդ անհրաժեշտ է արդյունաբերութեան շինարարութեան համար: Միութեանն աշխատում է բարձրացնել իր անդամների կուլտուրական մակարդակը, վորովհետև այդ նրանց հնարավորութեան կը տա ավելի գիտակցաբար մասնակցելու չեռերի սոցիալիստական շինարարութեանը:

Միութեանը դնում է իր յուրաքանչյուր անդամի առաջ հետևյալ գլխավոր պահանջը. կոմյերիտականը պետք է կարողանա իր անձնական շահերը չենթարկել հեղափոխութեանը և դիտարկել շահերին: Միայն այն ժամանակ դու արժանի կը լինես լեյնիստի կոչման, չեքք դու քո ամբողջ աշխատանքին կը մոտենաս և ոչ

թե սեփական, այլ ամբողջ բանվոր դասակարգի շահերի տեսակետից:

— Այդ իմ հաշիվը չե, միայն թե բարելավեմ դրութեանս, իսկ մնացածն ինձ չի վերաբերում,— այսպես չի կարող ասել կոմյերիտականը: Քանի վոր, ով այդպես է մտածում, նա դադարում է խորհրդային կառուցող լինելուց, դառնում է քաղքենի, իզուր է կրում և միայն խայտառակում լեյնիստի անունը:

«Միութեան անդամ լինել,—ասում էր Լեյնինը,—նշանակում է այնպես գործը տանել, վորպեսզի իր ուժերը, իր աշխատանքն ընդհանուր գործին նվիրել: Ահա այս է կոմմունիստական դաստիարակութեանը: Միայն այդպիսի աշխատանքի մեջ է չեռիտասարդ տղան կամ աղջիկը դառնում իսկական կոմմունիստ»:

Զգուշացրե՛ք բարելավելու իր նյութական դրութեանը կոմյերիտականը շարունակ պետք է հիշի չեռերի միջոցների ու տնտեսական դրութեան մասին: Դիցուք, այս կամ այն առանձին կոմյերիտականը, կամ կոմյերիտականների այս կամ այն խմբակը աշխատավարձի հավելում է ուզում. բայց ամբողջ ժողովրդական տնտեսութեան դրութեանը, բանվորական պետութեան ընդհանուր շահերը այդպիսի հավելումն անհնար են դարձնում: Յեթե կոմյերիտականների խմբակն այնու-

ամենայնիվ պնդի իր հավելաման մասին, մենք այն ժամանակ պետք է տեսնք, Վոր այդ կոմյերիտականներն իրենց խմբակային շահերի համար մոռացութեան են տալիս ամբողջ բանվոր դասակարգի շահերը:

Կոմյերիտութիւնն իր անդամներին պետք է սովորեցնի անձնական շահերը կապելու կուսակցութեան և հեղափոխութեան ընդհանուր խնդիրների հետ: Հենց այդ է Միութեան գլխավոր դաստիարակչական աշխատանքը:

Յեղնելով կոմյերիտականի անձնական շահերից, պետք է բարձրացնել նրա՝ գիտակցութիւնը մինչև հեղափոխութեան ընդհանուր խնդիրները:

Կոմյերիտականը պետք է գիտենա, ինչ կախում կա նրա աշխատավարձի մակարդակի և չերկրի անտեսութեան մեջ, ինչ կապ կա արտադրութեան մեջ նրա, կոմյերիտականի, կատարած աշխատանքի և չերկրի ինդուստրիացման մեջ: Կոմյերիտականի համար պետք է պարզ ու հասկանալի դարձնել, Վոր ինքը կատարելով հաստոցի մաս իր փոքրիկ աշխատանքը, այդպիսով իսկ կանգնում է սոցիալիզմի կառուցողների շարքերում: Կոմյերիտականը պետք է յուրացնի, Վոր բանվոր դասակարգը՝ թե՛ ավագ և թե՛ չերիտասարդ սերունդը, կապված է ընդհանուր պայքա-

րով, Վոր նա, կոմյերիտականը, բանվորական մի մեծ ընտանիքի անդամն է:

Պետք է այնուհետև հասկացնել կոմյերիտականին, Վոր ԽՍՀՄ համաշխարհային հեղափոխութեան հենարանն է, Վոր մենք, աշխատելով ամբողջում ԽՍՀՄ, աշխատում ենք համաշխարհային հեղափոխութեան համար: Վոր կոմմունիզմի համար մղած ընդհանուր պայքարով իրար հետ միացված են ամբողջ աշխարհի բանվորները:

ԱՆԿՎԱՆ ՏՐԱՄԱԳՐՈՒ-

ՔՅՈՒՆՏԵՐԻ ՂԵՄ

ԽՍՀՄ բանվոր դասակարգը սոցիալիզմ է կառուցում մի չերկրում, Վորտեղ ճնշող մեծամասնութիւնը գյուղացիութիւնն է, մի չերկրում, Վորտեղ բանվորները բնակչութեան չնչին փոքրամասնութիւնն են կազմում: Մենք արդեն կարողացինք չերրորդ զրուցում, թե ինչ դժվարութիւնների հետ է կապված մեր տնտեսական դարգացումը նեպի որոք: Պետական արդյունաբերութեան և տնտեսական այլ իշխող բարձունքների ծավալման հետ միասին տեղի չե ունենում կուլակութեան աճումը գյուղում, և մասնավոր կապիտալի աճումը՝ քաղաքում. գոյութիւն ունի մեծ գործազրկութիւն, Վորի թվում և բանվոր դասակարգի միջև: Սոցիալիստական շինարարութեան ճակատում յուրաքանչյուր հաջողութիւն ձեռք բերվում մեծագուշն ջանքերի գնով: Մեր

ուղին միայն հաղթանակներով լի ուղի չէ: Հաղթանակներին հաջորդում են և պարտություններ: Մենք գործել ենք և անխուսափելիորեն դեռ կը գործենք շատ սխալներ: Այդ սխալներից ոգտվում են մեր թշնամիներն իրենց ամբողջ անհաճության համար: Քանի գնանք, ավելի խոշոր կը լինեն մեր հաջողությունները, բայց և ավելի խոշոր կը լինեն այն դժվարությունները, վոր բանվոր դասակարգը ստիպված է հաղթահարել:

Ինչպես մենք տեսանք կուսակցության վերաբերյալ զրույցում, այդ դժվարությունները յերբեմն տատանումներ են առաջացնում նաև կուսակցության ներսում: Նույնիսկ կոփված մարտիկների մեջ նրանք յերբեմն թերահավատություն են առաջացնում դեպի սոցիալիստական շինարարության գործը: Պարզ է, վոր նման անկման տրամադրությունները կարող են զարգանալ նաև կոմյերիտական յերիտասարդության մեջ: Բավականաչափ պայքարի փորձառություն ու քաղաքական գիտելիքներ չունենալով, կոմյերիտականը յերբեմն շինարարության դժվարությունների յետևից չի տեսնում գլխավորը, այն է՝ վոր մենք գնում ենք դեպի սոցիալիզմ: Յերիտասարդության մեջ յերբեմն բացակայում է մեր զարգացման սոցիալիստական ճանապարհի պարզ ըմբռնումը:

Մենք, որինակ՝ յերբեմն հանդիպում ենք այնպիսի դեպքերի, յերբ յերիտասարդությունը չի հասկանում մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը: Անկման տրամադրությունների հետևանքը լինում է կոմյերիտականների մեջ նկատվող հարբեցողության, խուլիգանության զարգացումը:

Միությունը բազմակողմանի դաստիարակչական աշխատանքով պետք է վճռապես կռվի նման տրամադրությունների դեմ: Քանի վոր թե րահավատությունը դեպի սոցիալիզմի շինարարությունը դժվարացնում է մեր պայքարը և ձեռնտու չեմեր թշնամիներին:

Ինչպես մատնանշում է ԿՅԵՄ 7-րդ համագումարի բանաձևը դեպի մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակը տաժած թերահավատության դեմ պայքարն անհրաժեշտ է առավել ևս այն պատճառով, վոր «յերիտասարդ աճող սերունդը չունի կապիտալիզմի որոք մղած պրոլետարական պայքարի փորձ, և վոր մեր թշնամիները (մենշևիկները, եսերները, բուրժուական ինտելիգենցիան) աշխատում են քաղաքականապես ձեվակերպել յերիտասարդության անկման տրամադրությունները և նրա մեջ սերմանել կոս-

կածներ դեպի կուսակցության քաղաքականության ճշտությունը»:

Կոմյերիսական աշխատանքի աշխուժացումն ու ներմուծքնական դեմոկրատիա

Սոցիալիզմի շինարարությունը կոմյերիսականության առաջ դնում է ավելի բարդ խնդիրներ: Միությունը քանակով շատ է աճել: Ամեն ուր Միության շարքերն են զավիս լերիտասարդության նոր ջոկատներ, վորոնց մեջ պետք է համառ դաստիարակչական աշխատանք կատարել: Դեպի իրենց Միությունը կոմյերիսականները մեծ պահանջներ են դնում. կոմյերիսականն ուզում է, վոր Միությունը նրան իսկապես ոգնի դառնալու տնտեսական ու խորհրդավոր շինարարության գիտակից մասնակիցը:

Ահա թե ինչու կուսակցության 14-րդ և ապա ԿՅԵՄ 7-րդ համագումարները Միության առաջ խնդիր են դրել՝ աշխուժացնել կոմյերիսական աշխատանքը:

Զի կարելի բոլոր կոմյերիսականներին հավասարապես դարձնել Միության ակտիվ անդամները, ակտիվությունը կախված է պատրաստականությունից, ընդունակություններից, միութենական ստաժից: Բայց պետք է ձգտել միայն նպատակի, վորպեսզի կոմյերիսական բջիջի յուրաքանչյուր անդամ տեղյակ լինի միութենա-

կան կյանքի բոլոր կարևոր հարցերին, մասնակցություն ցույց տա նրանց քննությանն ու լուծմանը: Պետք է այնպես անել, վոր բջիջի յուրաքանչյուր անդամ կատարի միութենական մի վորոշ աշխատանք:

Պետք է ամենից առաջ աշխուժացնել բջիջների ժողովները: Ի՞նչ պատկեր ենք մենք տեսնում սովորաբար այժմ: Զեկուցումների առթիվ կան ակտիվից մի տասը մշտական խոսող ընկերներ: Ինչո՞ւ չե այդպես լինում: Վորովհետև հաճախ ժողովները բավականաչափ չեն նախապատրաստվում, վորովհետև ժողովներում չեն դրվում հրատապ, կոմյերիսականներին հուզող հարցեր:

«Անհրաժեշտ է,—ասում է 7-րդ համագումարը,—աշխուժացնել ներմիութենական կյանքն ավելի մեծ պատրաստությամբ տանելով բջիջների ընդհանուր ժողովները, դնելով այդ ժողովներում հրատապ թե քաղաքական և թե կուլտուր-տնտեսական և կենցաղային հարցեր և այդ հարցերի քննությանը մասնակից դարձնելով ավելի մեծ թվով ընկերների»:

Կոմյերիսական աշխատանքի աշխուժացումը հնարավոր է միայն «կոմյերիսական մեջ հետևողական կերպով ներկուսակցական դեմո-

կրատիալի սկզբունքների կիրառման պայմանով» (ԿՅԵՄ 7-րդ համագումարի բանաձևից):

Պետք է խստիվ պահպանել միութենական մարմինների ընտրողականության կարգը: Այն ընկերների թեկնածությունների, վորոնք, առաջ են քաշվում, որինակ՝ ընդհանուր գործարանային ԿՅԵՄ բջիջի բյուրոյի կազմի մեջ, պետք է լայն չափով համբարային բջիջներում: Միութենական մարմինները՝ սկսած բջիջի բյուրոյից մինչև Կենտրոնական Կոմիտեն պետք է պարբերաբար հաշիվ տան իրեն կատարած աշխատանքի մասին: «Միության ապալարատն ու Կոմյերիտ միության ակտիվն ընդհանրապես պետք է ուշադրությամբ նկատի առնեն Կոմյերիտականների քննադատությունը և ոգտագործեն գործնական նկատողությունները հետագա պրակտիկ աշխատանքի համար (7-րդ համագումարի բանաձևից): Կարելի չէ համեմատո թյուն դնել ներկուսակցական և ներմիութենական դեմոկրատիայի միջև:

Ներկուսակցական դեմոկրատիան (գրա մասին ասված է իններորդ գրույցում) նպատակ ունի բարձրացնելու կուսակցության անդամների ակտիվությունն ու գիտակցությունը: Ներկուսակցական դեմոկրատիան կիրառելով, կուսակցությունը ձգտում է, վորպեսզի իր անդամներին յուրաքանչյուրն ամենայնուանդուն մաս-

նակցությունը ցույց տա կուսակցության կյանքին:

Ներմիութենական դեմոկրատիան նույնպես նպատակ ունի բարձրացնելու Կոմյերիտականի ակտիվությունը, գիտակցությունն ու ինքնագործունեցությունը: Սոցիալիստական շինարարության խնդիրները բարդանում են, — Կոմյերիտականից ճշտություն է պահանջվում ըմբռնելու կուսակցության քաղաքականության դժվարին հարցերը:

Կոմյերիտականի գիտակցությունը կարելի չէ բարձրացնել վոչ թե գոռալով նրա վրա, կամ հրամաններ արձակելով, այլ նրան հնարավորություն տալով մասնակցելու միութենական կյանքին վերաբերող հարցերի նախնական քննությանը, տվյալ բջիջի աշխատանքներին:

Կոմյերիտական աշխատանքի աշխուժացումը, ներմիութենական դեմոկրատիայի համառ կիրառումը վոչ մի կերպ չպետք է անդրադառնա միութենական կարգապահության (գիսցիպլինայի) դրության վրա: Ընդհակառակն, ներմիութենական դեմոկրատիան պետք է ուժեղացնի կարգապահությունը Կոմյերիտականների մեջ, այդ կարգապահությունն ավելի գիտակից դարձնելով:

Պեճեք եւ ավելի լավ Միութեան հասարակա-
 հիմքերի վրա գնել կան աշխատանքը, — խորհրդ-
 միութեան հասարա- դալին, արհեստակցական,
 կական աշխատանքը կոոպերատիվ, — հսկայական
 նշանակութիւն ունի Միութեան աշխատանքի աշ-
 խո ժաջման, կոմյերիտականի կոմունիստա-
 կան դաստիարակութեան համար: Հասարակական
 աշխատանքներում Միութեանն աճեցնում է նոր
 մարտիկների ու կառուցողների ամբողջ խավեր:
 Միայն գործարանային կոմիտեներում ԿՅԵՄ 7-րդ
 համագումարի ժամանակներում աշխատում էր
 80 հազար կոմյերիտական, մինչդեռ այդ թիվը
 6-րդ համագումարի ժամանակին միայն 10 հա-
 զար էր: Հասարակական աշխատանքի զանազան
 ճյուղերի միջոցով կոմյերիտմիութեանը խորհրդ-
 դալին շինարարութեան մեջ է քաշում իր ան-
 դամներից տասնյակ հազարավորներին:

Բայց թվական այդ հաջողութիւններին հա-
 ճախ չի համապատասխանում Միութեան հասա-
 րակական աշխատանքի վորակը:

«Հիմնական թերութիւնն այն է, — մատնա-
 նշում է 7-րդ համագումարում իր զեկուցման
 մեջ ընկ. Զապլինը, — վոր մեզանում հասարակա-
 կան աշխատանքներին բնիշներում մոտենում են
 մեքենայորեն, ձեականորեն, և վոչ թե ըստ ելու-
 թեան, ձգտում են միայն ապացուցելու, վոր

այս ինչ բնիշում ավելի մեծ տոկոսը բեռնավոր-
 ված է, քան առանց բեռնավորման: Նրանք ի-
 րենց առաջ այսպիսի մի խնդիր չեն դնում՝ վոր
 յեթե տղային աշխատանքի ուղարկեցիր, հետե-
 վիր, վոր այդ աշխատանքը համապատասխանի
 նրա ընդունակութիւններին, նրա ձգտումներին,
 վոր նա աճի այդ աշխատանքում»:

Մենք հաճախ տեսնում ենք այնպիսի կոմյե-
 րիտականներ, վորոնք անդամ են խորհուրդների,
 անդամ են գործարանային կոմիտեների, արտա-
 դրական հանձնաժողովների և այլն: Զարմանքից
 ապշում են, թե ինչպես այդ տղան կարողանում
 է հաղթահարել այդ հսկայական բեռնավորումը:
 Բայց հարցը շատ հեշտ է լուծվում. չափից
 դուրս ծանրաբեռնված ընկերը չի կատարում իր
 պարտականութիւններին և վոչ մեկն ինչպես
 հարկն է: Իգուր գրավելով հասարակական վորևե
 պաշտոն, կոմյերիտականը խանգարում է միայն
 հասարակական կազմակերպութիւններին աշխա-
 տանքներին, իսկ ինքն իր համար վոչ մի ոգուտ
 չի կարողանում ստանալ այդ աշխատանքից:

Կոմյերիտականը հաճախ բավականաչափ չի
 հասկանում հասարակական աշխատանքի բացա-
 ուիկ կարևորութիւնը: Կուսակցութեան և խոր-
 հրդալին իշխանութեան աշխատանքն այնպես է
 կառուցված, վոր նրան իրոք կարելի է մատնակից

դարձնել յուրաքանչյուր բանվորի ու գյուղացու։
Ձեռնարկություններում և գյուղում կան հսկա-
յական թվով զանազան հասարակական կազմա-
կերպություններ։ Աշխատելով խորհրդում, կոո-
պերատիվում, արհմիությունում, փոխադարձ ոգ-
նության կոմիտեյում և այլն, կոմյերիտականը
հաղորդակից է լինում խորհրդային շինարարու-
թյանը։ Կարևոր է միայն, փորպեսզի կոմյերիտա-
կանն իրոք աշխատի։ Թող նա կատարի փոքր աշ-
խատանք, թող նա ունենա փոքր բեռնավորում, — կա-
րևոր է, փոր նա իրոք կատարի այդ աշխատանքը։
Այն ժամանակ հասարակական աշխատանքն իս-
կապես կը դաստիարակի կոմյերիտականին։

Կոմյերիտսմիությունն Կուսակցության կողմից
ու պիոներները Միության վրա չե գրված
պիոներական շարժման անմիջական ղեկավարու-
թյունը։ Հետևյալ թվերը ցույց են տալիս այդ
շարժման թափը.

1924 թ. հուլիսի 1-ին չեղել է 200 հազ. պիոն.
1925 » հունվարի 1-ին » 1 միլ. (քիչ ավելի)
1926 » » » 1 » 500 հազար
(մի փոքր ավելի) և 200 հազ. հոկտեմբերակ.։

Պիոներական կազմակերպության անելիքն է՝
կոմմունիստներեն դաստիարակել աշխատավորու-
թյան մանուկների լայն խավերն «նրանց ինքնա-
գործունեյության զարգացման և կուսակցու-

թյան ու կոմյերիտմիության շուրջը համախմբե-
լու հիմունքով»։ Այդ իրագործվում է պիոներ-
ների՝ հասարակական կյանքի մասնակցության և
նրանց մեջ դաստիարակչական աշխատանք տա-
նելու միջոցով։

Պիոներական կազմակերպությունների աշ-
խատանքը հսկայական նշանակություն ունի
կուսակցության ամբողջ աշխատանքի համար։
Սխալ է կարծել, թե պիոներների հետ կատա-
րած աշխատանքը միայն մի քանի հատուկ ջոկ-
նրված կոմյերիտականների անելիքն է։

Պատանիների կոմմունիստական դաստիարա-
կության խնդիրը Միությունը հաջողությամբ
կարող է իրականացնել միայն այն դեպքում,
չեք այդ խնդրի իրականացման մասնակցու-
թյուն ցույց կը տա կոմյերիտականների ամ-
բողջ մասսան։

Կոմյերիտականը, վու- Պայքարելով ու կառու-
պես Կիմ-ի աճաճ ցելով, ամրացնելով մեր բան-
վորական պետությունը, մենք այդպիսով իսկ
նախապատրաստում ենք կապիտալիզմի բոլոր
յերկրներում պրոլետարական հեղափոխության
հաղթանակը։ Յուրաքանչյուր կոմյերիտական
պետք է շարունակ հիշի, փոր ինքը Յերիտասար-
դության Կոմմունիստական Ինտերնացիոնալի ան-
դամ է, պետք է հիշի այն պարտականություն-

**ՅԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ,
ԱՐԼՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԿՈՄՅԵՐԻՑՄԻՈՒԹՅՈՒՆԸ» ԲԱԺՆԻ ԱՌԹԻՎ**

Յերկրորդ մասի (բաժնի) հինգ զրույցներում մենք քննության առանք հետևյալ հարցերը.
1) կուսակցության մասին և 2) կուսակցությունից դեպի անկուսակցական մասսաները տանող փուլերի՝ խորհուրդների, արհմիությունների և կոմյերիտմիության մասին: Այժմ հանենք մի քանի չեղրակացություն:

1. Բանվոր դասակարգի մղած պայքարի հաջողության չերաշխիքը, պրոլետարիատի դիկտատուրայի ամրության չերաշխիքը կուսակցության չերակաթե միասնականությունն է:

Մեր կուսակցության միասնականությունը հիմնվում է գաղափարական անհաշտության վրա:

Տրոցկիզմը միասնականությունը հասկանում է զանազան հոսանքների մի միություն, վոր իրար հետ համաձայնության են գալիս այս կամ այն հարցի վերաբերյալ: Լենինիզմը միասնականությունը հասկանում է, վորպես հայացքների անվերապահ միասնականություն և ամենախիստ կարգապահություն (դիսցիպլինա): Քանի վոր միայն լենինյան միասնականությունն է կուսակցությանն ընդունակ դարձնում ղեկավարելու բան-

վոր դասակարգը, իսկ ըստ Տրոցկու մենք ստանում էինք մի անկայուն, թուլակազմ կուսակցություն, վորտեղ յուրաքանչյուր հոսանք տարբեր ուղղությամբ է քաշում կուսակցությանը:

Տրոցկիզմը դեռ Հոկտեմբերյան հեղափոխությունից շատ առաջ կատաղի պայքար էր մղում Լենինի դեմ, իսկ Լենինն էր, վոր ստեղծում էր բալլևիկական պողպատե կուսակցություն: Այժմ, յերբ տրոցկիզմի գաղափարական ղեկավարությամբ տեղի յե ունենում բոլոր հակալենինյան խմբավորումների հավաքը կուսակցության դեմ պայքարելու համար, խիստ անհրաժեշտ է վերհիշել և ուսումնասիրել Տրոցկու մղած պայքարը բալլևիկների դեմ:

Առանձնապես կարևոր է ծանոթանալ նրան, թե ինչպես 1912 թվին (ոգոստոսին) Տրոցկին կազմեց բոլոր ռադիկալիստական հոսանքների մի բլոկ բալլևիկների դեմ պայքարելու համար («Ոգոստոսյան բլոկ»):

Առաջիկա հեղափոխական մարտերի համար բանվոր դասակարգի ուժերի նախապատրաստման ու հավաքի ժամանակն էր այդ: Շատ բանում այդ ժամանակը հիշեցնում է կոմկուսակցությունների՝ Արևմուտքում մղած պայքարի պարագան: Կուսակցության առաջ դրված էր բանվորական մասսաների նվաճման, նրանց՝ ճիշտ,

բայլշէկիկական գծի բացատրութիւն խնդիրը: Բայլշէկիկներն ոգտագործում էին դրա համար յուրաքանչիւր պատեն հնարավորութիւն: Նը-
րանք համառորեն կառուցում էին գաղտնա-
գործ կազմակերպութիւն, կուսակցութիւն հիմ-
քը. միևնույն ժամանակ բայլշէկիկները մասսա-
ների մեջ աշխատանք տանելու համար ոգտա-
գործում էին այն «լեզալ հնարավորութիւն-
ները», վոր ներկայանում էին ցարական ռեժի-
մի պայմաններում: Պետական Դումայում (ցա-
րական բուրժուական-կալվածատիրական պար-
լամենտում) ունեցած յելույթները, ջախջախու-
մից վողջ մնացած արհմիութիւններում, ապա-
հովագրական գանձարկղներում, բանվորական
կուլտուր-լուսավորական կազմակերպութիւննե-
րում և այլ նման աշխատանքները բայլշէկիկներն
անհրաժեշտ էին համարում մինչև վերջ ոգտա-
գործել, վորպեսզի ավելի լավ կապվեն բանվո-
րական մասսայի հետ, համախմբեն այդ մաս-
սան, պատրաստեն նոր մարտերի համար: Բայլ-
շէկիկները և՛ գաղտնագործ և՛ լեզալ աշխատանքը
հավասարապես կապված եր մեծ վտանգների ու
հետապնդումների, բանտի ու տաժանակիր աշ-
խատանքի հետ:

«Ռուս պրոլետարիատը,—ասում եր Լենինը
այն ժամանակ բոլոր թերահավատներին,—կա-

րող ե պարծենալ նրանով, վոր 1905 թվին նրա
դեկավարութիւնը ստրուկների ազգը դարձավ
առաջին անգամ ցարիզմի վրա հարձակվող մի-
լիոնավոր մարդկանց մի բանակ, հեղափոխու-
թիւն բանակ: Յեւ նույն այդ պրոլետարիատը
կը կարողանա այժմ տոկունութիւնը, համբերու-
թիւնը կատարել ավելի հզոր հեղափոխական
ռեժիմ նոր բնակազմերի նախապատրաստութիւն
ու դաստիարակութիւն աշխատանքը»:

Շնորհիվ իրենց ամբողջ աշխատանքին, բայլ-
շէկիկներն ավելի ու ավելի էին տարածում ի-
րենց ազդեցութիւնը բանվորական մասսաների
վրա, իսկ 1917 թվին բանվոր դասակարգի ճնշ-
ող մեծամասնութիւնը գնաց բայլշէկիկների հե-
տևից:

Գաղտնագործ ու լեզալ աշխատանքի զու-
գակցման իրենց ճիշտ գիծը բայլշէկիկները ստիպ-
ված էին պաշտպանել բանվոր դասակարգի ու պ-
պորտունիստական, մանր բուրժուական հո-
սանքների դեմ մղած պայքարում:

Ուպորտունիստական մի թեր կազմող մեն-
շէկիկ լիկվիդատորները (լիկվիդացիա—վերացում
բառից) ապացուցում էին, վոր հեղափոխու-
թիւնն այլևս չի գա, և կոչ էին անում բան-
վորներին հրաժարվել հեղափոխական պայքարից:
Լիկվիդատորները պահանջում էին լիկվիդացիա-

յի յենթարկել (վերացնել) կուսակցութիւն գաղտնագործ կազմակերպութիւնը, հարմարվել ցարական ռեժիմի պայմաններին և ստեղծել լեգալ (այսինքն կառավարութիւն կողմից թույլատրւած) կուսակցութիւն:

Մի այլ մանր-բուրժուական հոսանք, — «ոտգովիստները» (հետ կանչման հոսանք) դեմ էր մասսաների մեջ տարվող կուսակցական աշխատանքի համար լեգալ հնարավորութիւններն ոգտագործելու: Ծածկվելով զանազան հեղափոխական ֆրագներով ոտգովիստներն առում էին, վոր բայշէկիկներին անվայել է հանդես գալ Պետական Դումայում, վոր, իբր թե, հեղափոխականները չպետք է ոգտվեն աշխատանքի այնպիսի հնարավորութիւններից, վոր տրվում են անիծված ցարական ռեժիմի կողմից: Յեթե բայշէկիկներն ընթանային այդ ուղիով, նրանք զգալիորեն կը կորցնէին իրենց կապը բանվորական մասսայի հետ, նրանք կուժեղացնէին մենշէկիկ լիկվիդատորներին, վորոնք ոգտագործում էին լեգալ հնարավորութիւնները բանվորների մեջ դավաճանական պրոպագանդ մղելու համար:

Լիկվիդատոր-մենշէկիկները դավաճանում էին հեղափոխութեանը, պահանջում էին վերացնել գաղտնագործ կուսակցական կազմակերպութիւնը. ոտգովիստները ձգտում էին կտրելու

կուսակցութիւնը բանվորական մասսաներից, կուսակցութիւնը վերածելու հեղափոխականների մի աղանդի (մի փոքր խմբի) առանց մասսաների հետ չեղած կապի: Այդպիսով իսկ խախտված կը կլինէր կուսակցութեան՝ հեղափոխութեան համար ուժեր պատրաստելու աշխատանքը: Այդ չերկու բուրժուական հոսանքներն էլ, հանդես գալով զանազան լոզունգներով հավասարապես վտանգավոր ելին, և բայշէկիկները Լենինի գլխավորութեամբ անխնա պայքար էին մղում թե լիկվիդատորների և թե ոտգովիստների դեմ:

Տրոցկիզմն այն ժամանակ հանդես եր յեկել բայշէկիկներին, լիկվիդատորներին և ոտգովիստներին «հաշտեցնելու» լոզունգներով: Հաշտեցման նման քարոզը պակաս վտանգավոր չեր, քան ինքը՝ լիկվիդատորութիւնը, վորովհետեւ նա բայքայում եր բայշէկիկներին՝ պրոլետարական մարտական հեղափոխական կուսակցութիւն պահպանելու աշխատանքը, վորովհետեւ նա խաբում եր բանվորներին, ներկայացնելով լիկվիդատորներին, վորպես հեղափոխականներ:

«Հեղափոխական ֆրագան, — գրում եր այն ժամանակ Լենինը Տրոցկու մասին, — ծառայում է այն նպատակին, վորպեսզի ծածկի և արդարացնի լիկվիդատորութեան կեղծիքը, այդպիսով աղտոտելով բանվորների գիտակցութիւնը...»

Տրոցկու խնդիրն է լիկվիդատորությունը, ավագ ցանկերով բանվորների աչքերին»:

«Տրոցկին ու նրա նման տրոցկիստներն ու համաձայնողականներն ավելի փաստակար են յուրաքանչյուր լիկվիդատորից, քանի վոր համոզված լիկվիդատորներն ուղղակի մեկնաբանում են իրենց տեսակետները, և բանվորների համար հեշտ է ըմբռնելու նրանց սխալականությունը: Իսկ պ.պ. Տրոցկիները խաբում են բանվորներին, ծածկում են չարիքը, անհնար են դարձնում նրա (չարիքի) մերկացումն ու նրանից բուժումը: Յուրաքանչյուր նա, ով պաշտպանում է Տրոցկու խմբակին, պաշտպանում է՝ բանվորներին խաբելու և ստելու քաղաքականությունը, լիկվիդատորությունը ծածկելու քաղաքականությունը»:

1912 թվին Տրոցկին ստեղծում է «Ոգոստոսյան Բլոկը» լիկվիդատորներից, ոտզովիստներից ու տրոցկիստներից: Լենինյան-բալլևիկների կուսակցությանը Տրոցկին աշխատում էր հակադրել բանվոր դասակարգի ներսում չեղած բոլոր մանր-բուրժուական հոսանքների միությունը, մի միություն, վոր պատրաստված էր ըստ Տրոցկու կանոնի, այն է՝ «ապրիր և թո՛ղ, վոր ուրիշներն ել ապրեն»: Բայց տրոցկիստական բլոկը ի վիճակի չէր խախտելու և մինչև իսկ թուլացնելու Լենինյան, բալլևիկական շար-

քերը: Չնայած տրոցկիզմի կատաղի հալածանքին, բալլևիկները կարողացան վոչ միայն պահպանել, այլև ուժեղացնել իրենց ազդեցությունը բանվորական մասսաների վրա և 1917 թվին բանվոր դասակարգի միակ ու բոլորի կողմից ճանաչված ղեկավարն ելին: Իսկ ոգոստոսյան բլոկը քայքայվեց անփառունակ կերպով, թողնելով բանվոր դասակարգին տրոցկիստական «միության» մի խրատական դաս:

Այժմ ընկ. Տրոցկին կարծես թե ձգտում է նորից կրկնելու ոգոստոսյան բլոկի փորձը: Տրոցկու գաղափարական գլխավորությամբ կուսակցության մեջ ստեղծվել է ոպպոզիցիոն մի բլոկ, վորի մեջ մտնում են կուսակցության զանազան մանր-բուրժուական հոսանքների ներկայացուցիչները: Այդ հոսանքներից յուրաքանչյուրն ունի իր, իրար հակառակ, լոգունգներն ու պլատֆորմաները: Ինչպես ոգոստոսյան բլոկի որերին մանր-բուրժուական զանազան հոսանքները միացել ելին բալլևիկների պրուետարական տոկուն գծի դեմ պայքարելու համար, այժմ ել ոպպոզիցիոն բլոկի բազմատարր մասերին միացնում է կուսակցության Լենինյան քաղաքականության ու նրա կենտրոնական կոմիտեյի դեմ մղվող պայքարը:

Ոպպոզիցիոն բլոկը ձգտում է վերածելու մեր պողպատե կուսակցությունը ֆրակցիաների

ու խմբավորումների միության. ուղղորդիցիոն բլոկը կուսակցական կարգապահության չտեսնված խախտումներ ե թույլ տալիս իրեն, աշխատելով կուսակցության վզին փաթաթել դիսկուսիա աջնալիսի հարցերի վերաբերյալ, վոր վորոշված են կուսակցական համագումարների կողմից. ուղղորդիցիոն բլոկն ուզում ե փոփոխել ու խեղաթյուրել բանվոր դասակարգի ու գյուղացիության փոխհարաբերությունների նկատմամբ Լենինյան ճիշտ քաղաքականությունը. ուղղորդիցիան թերահավատություն ե սերմանում դեպի բանվոր դասակարգի ուժերը, դեպի մեր չերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը:

Բայց կուսակցության դեմ կազմած նոր բլոկի բախտն ավելի տխրալի չե իր կազմակերպողների համար, քան ոգոստոսյան բլոկինը: Ուղղորդիցիոն բլոկի հենց առաջին հարձակումը հազվագյուտ միահամուռ դիմադրություն գտավ ամբողջ կուսակցության կողմից: Կուսակցությունը չթողեց, վոր մի խումբ սնանկացած լիզերներ իր շինքին փաթաթի դիսկուսիա, կուսակցությունը կարգի հրավիրեց բոլոր կուսակցական միասնությունը խախտողներին:

Մեր կուսակցությունը կա ե կը մնա Լենինի միասնական, կարգապահ կուսակցություն:

2. Կուսակցության միասնությունն

ապահովում ե կուսակցության՝ խորհուրդներին ու արհմիություններին ցույց տված ճիշտ դեկավարությունը:

Խորհուրդների աշխուժացման, խորհուրդների աշխատանքներին բանվորների ու գյուղացիների անկուսակցական մասսաներին մասնակից դարձնելու վերաբերյալ կուսակցության գիծն իր լիակատար հաստատումը գտավ 1925 թ. վերընտրություններին: Խորհուրդների աշխուժացման գծի հետևանքով ուժեղացավ բանվոր դասակարգի՝ գյուղացիության վերաբերմամբ ունեցած դեկավարությունը, ամրացավ կուսակցության ազդեցությունը խորհուրդներում:

«Խորհուրդների աշխուժացման հիմունքով կատարած վերընտրությունները հայտնաբերեցին այն հանգամանքը, վոր միջակը սկսել ե հեռանալ կուլակից, միջակը մոտենում ե չքավորությանը, աճում ե չքավորության քաղաքական ակտիվությունը, թուլանում ե կուլակության՝ գյուղացիական մասսաների վրա ունեցած քաղաքական ազդեցությունը...: Գյուղերի խորհուրդների վերընտրությունների ընդհանուր արդյունքներից պարզվում ե՝ կուսակցության հեղինակության ու վստահության աճումը գյուղի հիմնական չքավոր ու միջակ մասսաների կողմից ե պրոլետարական

գիկտատուրայի ամրացումը (կենտկոմի հուլիսյան պլենումի բանաձևից):

Մեր պետական ապալարատում դեռ շատ բյուրոկրատիզմ կա:


Չափազանցեցրած ձևով դնելով պետական ապալարատի թերությունները, ուղղորդիչի աշխատում է կասկածներ սերմանել մեր պետութայն պրոլետարական բնույթի մասին, հեռանալով այդ հարցում ևս լենինիզմից և գործելով հոգուտ պրոլետարիատի գիկտատուրայի թշնամիներին:

Ի հարկե, կուսակցությունը պետք է ամենայնուանդուն պայքար մղի բյուրոկրատիզմի դեմ: Բայց այդ պայքարի հաջողութայն գլխավոր պայմանը կուսակցութայն միասնությունն ու համերաշխ աշխատանքն է: Ուղղորդիչի, վոր ձրգտում է խանգարելու կուսակցութայն աշխատանքներին, դժվարացնում է բյուրոկրատիզմի դեմ պայքարելը:

3. Կոմյերիտմիությունը կուսակցութայն ոգնականն ու ոժանդակն է: Կոմյերիտմիությունը կոմունիստորեն դաստիարակում է բանվորագյուղացիական յերիտասարդությունը: Կոմյերիտմիությունը կուսակցութայն հետ միասին պայքարում է հակալենինյան շեղումների դեմ, վորովհետև այդ պայքարում կոմյերիտմիությունը բալլշիկական փորձառություն է ձեռք բերում:

Այժմ, յերբ կուսակցութայն դեմ պայքար է մղում տրոցկիստական ուղղորդիչին բլոկը, կոմյերիտմիությունը վճռական դիմադրութայն ցույց տվեց միասնութայն խախտողներին:

Կոմյերիտմիությունը գիտե, վոր ինքը կուսակցութայն ոգնականն է. կոմյերիտմիությունը չի կարող ճնշում գործ դնել կուսակցութայն վրա: Նա մասնակցում է ներկուսակցական կյանքի այն հարցերի քննութայնը, վոր կուսակցությունն անհրաժեշտ ու նպատակահարմար է համարում դնելու կոմյերիտմիութայն քննութայնը: Միությունն աշխատում է կուսակցութայն ու նրա կենտրոնական կոմիտեյի ղեկավարութայնը: Միայն այդ ղեկավարությունն է ապահովում միութայնը նրա անընդհատ աճումն ու ամրացումը:



12. ԼՈՊԱՏԻՆ. Հաղթական չերկրի վրա, պատ-
կերազարդ, 70 էջ, 1926 թ., Յերևան. » — ր. 10 կ.
13. ԳԱԼՄԱՆՍՈՆ ՅԵՎ. ԲԵԿԱՐՅՈՒԿՈՎ. Պահ-
պանի անոջությունդ, 48 էջ, 1925 թ.,
Յերևան » — ր. 15 կ.
14. ԿԱՍԻՄԵՆՆՈ. Կոմյերիտները գյուղում, 64
էջ, 1925 թ. Յերևան » — ր. 20 կ.
15. ԿԱԶԼՈՎ. Առորչա պատմվածք, 48 էջ, .
1925 թ., Յերևան » — ր. 20 կ.
16. ԿՈՒԶՄԻՆ. Քրիստոս չհարյավ ի մեռելոց,
27. էջ, 1926 թ., Լենինական . . . » — ր. 15 կ.
17. ԿՎԻՐԻՆԳ. Կուսակցությունը գյուղում, 88
էջ, 1926 թ., Վաղարշապատ . . . » — ր. 30 կ.
18. ՄԵԴՎԵԴԵՎԱ-Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ. Հեղափո-
խության հերոս, 72 էջ, 1926 թ., .
Յերևան » — ր. 25 կ.
19. ՄԻՐԱՇԵՎՍԿԻ. Յերիտ. Կոմ. Ինտերնացիո-
նալի պատմությունը, 64 էջ, 1925 թ.,
Յերևան » — ր. 10 կ.
20. ՄԱՏԼԻՆ. Կոմյերիտմիությունը բանդե-
րում 90 էջ, 1925 թ., Յերևան . . . » — ր. 25 կ.
21. ՄԻՐԱՇԵՎՍԿԻ. Քրեատոմատիա Կոմյերիտ.
պատմության, 62 էջ, 1926 թ. Յերևան » — ր. 25 կ.
22. ՇԱՀԳՅԱԼԴԻ, Ա. Գյուղացին ու բանվորը
ցարի ժամանակ, 29 էջ, 1925 թ.
23. » Մեր գյուղը, 16, 1925 թ., Յ.
24. ԶՈՒԲԱՐ ՅԵ. Սկզբում, 48 էջ
Լենինական
25. ՍԱՐԱԲՅԱՆՈՎ. Պարզ զրույցն
կայի մասին, 171 էջ, 1925 թ., Յերևան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038706

ների մասին, վոր նրա վրա դնում է Յերիտկոմիտերնի (Կիմ-ի) անդամի կոչումը:

«Աշխատավորների պայքարը հաղթանակեց միայն աշխարհիս մի վեցերորդ մասում: Կապիտալիզմը դեռ իշխում է մնացած աշխարհում: Աշխատավորների պայքարը չի վերջանա, մինչև հեղափոխությունը չի հաղթանակի ամբողջ աշխարհում: Յուրաքանչյուր կոմյերիտական իր սովորական առօրյա աշխատանքներում պետք է հիշի, վոր նա, կանգնելով Լենինյան դրոշի տակ, իր կյանքը նվիրաբերել է կոմմունիզմի համար մղած պայքարի մեծ գործին և պետք է պատրաստ լինի կուսակցության առաջին իսկ կոչին կանգնելու մարտիկների առաջավոր շարքերում» (Միության կանոնագրքից):

Աշխատավորների միջազգային պայքարի մասին մենք կը խոսենք հաջորդ գրույցներում: Առանձին գրույցում մենք կստենք նաև Յերիտկոմիտերնի մղած պայքարի մասին:

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչո՞ւ բանվոր չերիտասարդությունը Միության հիմնական կորիզն է:
2. Ինչպե՞ս պետք է կանոնավորել Միության աճումը:
3. Ինչո՞ւ չե՞սխալ ու վտանգավոր պրոլե-

տարական ու կուսակցության հակադրությունը:

4. Ինչպիսի՞ նոր պահանջներ են նկատվում բանվորա - գյուղացիական չերիտասարդության մեջ:

5. Ինչո՞ւ մենք անկման տրամադրություններ ենք նկատում Միության վորոշ մասում:

6. Ի՞նչ պետք է անել ներմիութենական աշխատանքի աշխուժացման համար:

7. Ի՞նչ թերություններ են նկատվում Միության հասարակական աշխատանքի ասպարիզում:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

1. Իմացիր, ինչպես է ընդգրկված բանվոր չերիտասարդությունը քո ձեռնարկության մեջ և դիագրամմա պատրաստիր:

2. Ինչո՞վ է արտահայտվում քո ձեռնարկության մեջ Համկ. (բ.) Կ. բջիջի կողմից Համ. Լկյեմ. բջիջին ցույց տված դեկլարությունը (պատմիր կամ գրիր):

3. Գրիր, ի՞նչ հասարակական պարտականություններ ես տանում դու, և ինչպե՞ս ես կատարում այդ պարտականությունները:

26. ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Ողակին նավատորմը, 50 էջ
1925 թ., Յերևան . . . » — ռ. 50 կ.
27. ՍԱՖՐԱՋԲԵԳՅԱՆ, Գ. Մի զրույց բանակի
մասին, 20 էջ, 1925 թ., Լենինական » — ռ. 8 կ.
28. ՍԵՄԿՈՎՍԿԻ. Մարքսիստական քրեատոմա-
տիա յերիտասարդության համար
214 էջ, 1925 թ., Յերևան . . . » 1 ռ. 20 կ.
29. ԳՅՈՒՂՄԻԱՍՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ փոխադր.
Սիրաս, 26 էջ, 1925 թ., Վաղարշապատ — ռ. 10 կ.
30. ՍԱՆԴՈՄԻՐՍԿԻ. Յեվրոպան պատերազմից
հետո, 120 էջ, 1925 թ., Վաղարշապատ » — ռ. 35 կ.
31. ՎԼԱՍԵՆԿՈ. Աստված կամ արդյոք, 68 էջ.
1925 թ., Լենինական . . . Գինը — ռ. 30 կ.
32. ՏԱՐԱԽՉՅԱՆ. Ի՞նչ պետք է իմանա և անի
տնտեսա-իրավական աշխատողը կոմյերիտ-
միության մեջ, 61 էջ, 1925 թ., Վաղար-
շապատ . . . » — ռ. 20 կ.
33. ԳՅՈՒՂԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻՆ. Խորհուրդ-
ների III համագումարի մասին, 142 էջ,
1925 թ., Լենինական . . . » — ռ. 50 կ.
34. Ռուսկոմկուսի (բ) VIII համագումարը
յերիտասարդության մասին, թարգմ.
Վ. Փոթեյան, 104 էջ, 1925 թ., Յերևան » — ռ. 40 կ.